ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2017
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ
ՀԱՐՑԱՏՈՄՍ
10 - րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (12 միավոր)

ա. *Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8–րդ առաջադրանքներ:* (0,5 X 8 = 4 միավոր)

1. Ըստ Խորենացու՝ որտե՞ղ է գտնվել մեհենական պատմագրության արխիվը.
1) Աշտիշատում 3) Արտաշատում
2) Անի ամրոցում 4) Բագարանում

2. Ո՞ր գետի ափին էր կառուցվել Բագարան քաղաք–սրբավայրը.
1) Մեծամոր 3) Արածանի
2) Ախուրյան 4) Մեղրագետ

3. Որքա՞ն էր հայոց բանակի թվաքանակը հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու օրոք.
1) 20 հազար 2) 80 հազար 3) 60 հազար 4) 40 հազար

4. Ո՞վ էր Կիլիկյան Հայաստանի արքունիքում զբաղեցնում կանցլերի պաշտոնը 1260–1289 թթ.
1) Վահրամ Ռաբունին 3) Ներսես Լամբրոնացին
3) Սմբատ սպարապետը 4) Ներսես Շնորհալին

5. Ե՞րբ է ստեղծվել մանրանկարներով զարդարված և մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը.
1) 1001 թ. 2) 851 թ. 3) 989 թ. 4) 961 թ.

6. ՀՀ զինանշանի հեղինակներն էին՝
1) Վարդգես Սուրենյանցը և Հակոբ Կոջոյանը
2) Հակոբ Կոջոյանը և Ալեքսանդր Թամանյանը
3) Ալեքսանդր Թամանյանը և Մարտիրոս Սարյանը
4) Մարտիրոս Սարյանը և Եղիշե Թադևոսյանը

7. Ո՞վ էր Վանի թագավորության վերջին ականավոր տիրակալը.
1) Արգիշտի II 3) Ռուսա II

2) Ռուսա III 4) Սարդուրի III

8. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

«Քեզ պսակում եմ, Մերուժա՛ն, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»:

Ո՞ր ճակատամարտից հետո է տեղի ունեցել պատմիչի նկարագրած դեպքը.

1) Ակոռի 3) Գանձակ (Ատրպատական)
2) Ձիրավ 4) Արձնի

բ. Լրացնել պատասխանը. **(1 X 4 = 4 միավոր)**

1. Քաղաքները դասավորել ըստ դրանց հիմնադրման ժամանակագրական հաջորդականության.

ա. Դվին
բ. Զարիշատ
գ. Վաղարշապատ
դ. Արշամաշատ
ե. Երվանդաշատ
զ. Մծուրք

1	2	3	4	5	6

2. Կիլիկյան Հայաստանի հայոց իշխանների անունները դասավորել ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության.

ա. Թորոս II
բ. Մլեհ
գ. Կոստանդին I
դ. Լևոն I
ե. Ռուբեն I
զ. Թորոս I

1	2	3	4	5	6

3. Գահակալման տարիները համապատասխանեցնել Բագրատունի արքայի անվանը.

1. Սմբատ I ա. 928–953 թթ.
2. Աշոտ III բ. 977–990 թթ.
3. Աշոտ II գ. 953–977 թթ.
4. Աշոտ I դ. 914–928 թթ.
5. Աբաս ե. 890–914 թթ.
զ. 885–890 թթ.

1	2	3	4	5

4. Գահակալման տարիները համապատասխանեցնել Արտաշեսյան արքայի անվանը.

1. Արտաշես II ա. Ք. ա. 20–8 թթ.
2. Տիգրան IV բ. Ք. ա. 30–20 թթ.

3. Արտավազդ II — գ. Ք. ա. 115–95 թթ.
4. Տիգրան III — դ. Ք. ա. 95–55 թթ.
5. Տիգրան II — ե. Ք. ա. 8–5 թթ.
6. Տիգրան I — զ. Ք. ա. 55–34 թթ.
է. Ք. ա. 160–115 թթ.

1	2	3	4	5	6

գ. *Լրացնել պատասխանը:* (1 X 4 = 4 միավոր)

1. Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը. (0,5 X 2 = 1 միավոր)

1. Երվանդ Սակավակյացի գահակալության սկիզբը
2. Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
3. Հունական 10-հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
4. Երվանդ II-ի գլխավորած ապստամբությունն Աքեմենյան տերության դեմ
5. Զորավար Վահումիսայի և հայերի ընդհարումը Հյուսիսային Միջագետքում
6. Երվանդ III-ի դառնալը Հայաստանի սատրապ
7. Մեզ հասած առաջին հայկական արքայական դրամների հատումը
8. Գավգամելայի ճակատամարտը
9. Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ
10. Սելևկյան տերության ստեղծումը

2. Գտնել ճիշտ բացատրությունները. (0,5 X 2 = 1 միավոր)

1. Հայաստանի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով մինչև VI դարի երկրորդ կեսը հրավիրվող համաժողովրդական ժողովը կոչվում էր համաժողով:
2. Արշակունյաց արքունիքում յուրաքանչյուր նախարարի տեղը սահմանվում էր կարևոր պետական փաստաթղթով, որը կոչվում էր Աշխարհագիր:
3. Հայաստանի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով մինչև IV դարի երկրորդ կեսը հրավիրվող համաժողովրդական ժողովը կոչվում էր աշխարհաժողով:
4. Արշակունյաց արքունիքում յուրաքանչյուր նախարարի տեղը սահմանվում էր կարևոր պետական փաստաթղթով, որը կոչվում էր Գահնամակ:

5. Հայաստանի համար կարևորագույն հարցերը քննարկելու նպատակով մինչև VI դարի երկրորդ կեսը հրավիրվող համաժողովրդական ժողովը կոչվում էր տիեզերաժողով կամ եկեղեցաժողով:
6. Արշակունյաց արքունիքում յուրաքանչյուր նախարարի տեղը սահմանվում էր կարևոր պետական փաստաթղթով, որը կոչվում էր Զորանամակ:

3. Տրված որոշումներից որո՞նք ընդունվել են Աշտիշատի ժողովում.

(0,5 X 2 = 1 միավոր)

ա. Թագավորն ու մեծամեծները թող գթասիրտ լինեն իրենց ծառաների և ստորադրյալների նկատմամբ, սիրեն նրանց, ինչպես իրենց ընտանիքի անդամներին:

բ. Կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներ նշանակելիս պետք է հաշվի առնի միայն աշխարհատեր և աշխարհական նախարարների առաջարկները:

գ. Կաթողիկոսը թեմական եպիսկոպոսներ նշանակելիս պետք է հաշվի առնի ոչ միայն աշխարհատեր և աշխարհական, այլև գավառատեր և գավառական նախարարների առաջարկները:

դ. Թագավորն ու մեծամեծները անօրեն կերպով և չափազանց մեծ հարկերով թող չնեղեն հասարակ ժողովրդին:

ե. Թագավորն ու մեծամեծները թող գյուղական եկեղեցիների քահանաներին բոլոր ազարակ տեղերում տան չորսական, իսկ ավաններում՝ յոթական ծխի հողաբաժին:

զ. Թագավորն ու մեծամեծները թող զանազան գավառներից հավաքված մանուկներ ուղարկեն կաթողիկոսարան՝ Ավետարանի խոսքը ժողովրդին մատչելի դարձնելու համար հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելու նպատակով:

4. Գտնել երկու սխալ պնդումները. **(0,5 X 2 = 1 միավոր)**

ա. Կիլիկյան Հայաստանի գահակալ Լևոն I իշխանը, հույն Մանդալեի երեք որդիներին ձերբակալելով և մահապատժի ենթարկելով, լուծեց հայոց թագավոր Գագիկ II Բագրատունու սպանության վրեժը:

բ. Թեև Լևոն Մեծագործը Ռայմոնդ–Ռուբենին էր հանձնել Անտիոքի իշխանությունը և նրան հռչակել Կիլիկիայի թագաժառանգ, սակայն հետագայում նրա գործունեությունից հիասթափվեց և, փոխելով իր որոշումը, թագաժառանգ նշանակեց իր դուստր Զաբելին:

գ. Ստեփանեի որդի Ռուբեն իշխանն օգտվեց Բյուզանդիայի և Իկոնիայի սուլթանության միջև եղած առճակատումից և գրավեց Կիլիկիայի արևմտյան շրջան-

ները, որով վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը Կիլիկիայում:

դ. 1216 թ. Լևոն Մեծագործը Լամբրոնի տեր Օշին Հեթումյան իշխանին հրավիրեց Տարսոն և բանտարկեց, որից հետո առանց կռվի գրավեց և արքունիքին միացրեց այդ բերդը:

ե. Լևոն II իշխանը կապեր հաստատեց խաչակիրների առաջնորդներից Ֆրիդրիխ Շիկամորուս կայսեր հետ, խոստացավ օգնել խաչակիրներին, իսկ դրա դիմաց կայսրը համաձայնեց Լևոնին ճանաչելու Կիլիկիայի թագավոր:

զ. Կիլիկյան Հայաստանի նշանավոր տիրակալ Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայության հետ և խաչակիրներից հետ գրավեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջաններում գտնվող բերդերը:

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)

ա. *Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ:* (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ո՞րն էր Ամենհոտեպ IV–ի նորաստեղծ մայրաքաղաքը:

1) Թեբե
2) Մեմֆիս
3) Ախետաթոն
4) Ավարիս

2. Ե՞րբ է ստեղծվել Գերմանական (Տևտոնական) թագավորությունը:

1) 919 թ.
2) 962 թ.
3) 843 թ.
4) 1122 թ.

3. Ե՞րբ է ընդունվել «Մարշալի պլան» ծրագիրը:

1) 1945 թ.
2) 1955 թ.
3) 1949 թ.
4) 1947 թ.

4. Ո՞վ էր ղեկավարում Ժակերիա ապստամբությունը:

1) Ջոն Ուիկլիֆ
2) Գիյոմ Կալ
3) Յան Հուս
4) Ուոտ Թայլեր

բ. Լրացնել պատասխանը (1 X 2 = 2 միավոր)

1.Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)

ա) Կինոսկեֆալեի ճակատամարտը
բ) Տիզբոնի գրավումը Տրայանոսի կողմից
գ) Դակիայի նվաճումը Տրայանոսի կողմից
դ) Փիլիպոս V-ի պարտությունը Քիոս կղզու ճակատամարտում
ե) Սելևկյան բանակի պարտությունը հռոմեացիներից Թերմոպիլյան կիրճում
զ) Սասանյան հեղաշրջումը Իրանում

1	2	3	4	5	6

2. Համապատասխանեցրե՛ք իրադարձությունները տարեթվերի հետ:

(1 միավոր)

1) 1870–1871 թթ.
2) 1839–1876 թթ.
3) 1839–1842 թթ.
4) 1861–1865 թթ.
5) 1848–1852 թթ.

1	2	3	4	5

ա) Թանզիմաթի դարաշրջանը Օսմանյան կայսրությունում
բ) Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում
գ) Ափիոնի առաջին պատերազմը
դ) Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
ե) Ֆրանս–պրուսական պատերազմը
զ) Քաղաքացիական պատերազմը ԱՄՆ–ում

գ. *Լրացնել պատասխանը.* (0,5 X 2 = 1 միավոր)

1. Բերված փաստարկներից ընտրել 2-ը, որոնք հանդիսանում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հետևանք.

ա. Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր Լեհաստանից, Ֆինլանդիայից, Բելառուսիայի մի մասից, Ուկրաինայից և մերձբալթյան երկրներից: Օսմանյան

Թուրքիային էին տրվում ո՛չ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսն ու Արդահանը:

բ. Գերմանիան ընդունում էր իր պարտությունը և զորքերը դուրս բերում ռուսական ռազմակալված տարածքներից:

գ. Ռուսաստանը պարտավորվում էր վճարել 6 միլիոն ոսկի մարկ ռազմատուգանք:

դ. Գերմանիան պարտավորվում էր փոխհատուցել հաղթող երկրների նյութական վնասները:

ե. Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր դադարեցնել գաղտնի բանակցությունները Մեծ Բրիտանիայի հետ:

զ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվում էր ժամանակավոր վարչություն:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (3 միավոր)

1. Ներկայացրե՛ք Կիլիկյան Հայաստանի սոցիալ–տնտեսական հարաբերությունները և պետական կարգը.

ա) Հողատիրության ձևերը: Գյուղական համայնքը,

բ) Արքունիքը և բանակը,

գ) Դատական համակարգը:

Է. Մինասյան
Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

17. 04. 2017 թ.